


հաւորաբար, Տիար Հայկ Խաչէթեան, և անդամներէն Տիար Մկրտիչ Մանսուրեան Յանձնաժողովոյ նախագահին հետ, անձանձրոյթ ջանադրութեամբ աշխատեցաւ, գործադրելով ժողովին որոշումները և պտաշած մանրամասնութիւնները տընօրինելով և կարգադրելով ի հարկին:

Ինչպէս կը տեսնուի յատակագիծէն (տե՛ս թիւ 31) 5280 մէթր տարածութեամբ գետինէն եկեղեցին դրաւած է շուրջ 1000 մէթր քառակուսի տարածութեամբ մաս մը միայն:



(թիւ 35) Ումախոռե եւ արսախին զարդագօտի

մնացեալը ամբողջովին պիտի ծառայէ իբրեւ բակ, որուն հարաւային կողմը կրնան յառաջիկային շինուիլ հասութարեր տուններ, իսկ արեւմտեան կողմի մէկ մասին վրայ՝ Առաջնորդարան:

Սկիզբէն, ընդհանուր նկատողութեան առարկայ եղաւ եկեղեցիին քիչ մը աւելի ներսով հիմնարկուած չ'ըլլալու պարագան, ինչ որ հետեւանք էր Ազգ. Իշխանութեան կամքէն ան-